Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

,Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովումե ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Համընդհանուր ներառականության առավելություններն ու դժվարությունները

Վերապատրաստող, մենթոր՝ Սոնա Եղիազարյան

Ուսուցիչ՝ Լիլիթ Ալավերդյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն _____ 3
1. Գլուխ 1. Համընդհանուր ներառականությունը Հայաստանում _____ 7
1.1 Համընդհանուր ներառականության առավելությունները _____8
1.2 Համընդհանուր ներառականության դժվարությունները _____ 12
1.3 Առաջատար երկրների փորձը համընդհանուր ներառականության վերաբերյալ _____ 13
1.4 Համընդհանուր ներառականության առավելություններն ու դժվարությունները մեր դպրոցում _____ 14
2. Եզրակացություն _____ 16
3. Գրականություն _____ 17

Ներածություն

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանում անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Ներառական կրթությունը բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում հավասար վերաբերմունք երեխաների հանդեպ՝ կրթական համակարգում ստեղծոլով ուրույն պայմաններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար:

2000թվականից ի վեր ներառական կրթությունը, որպես կրթական բարեփոխումների մի մաս, հանդիսանում է ՀՀ Կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը:

ՀՀ Ազգային ժողովը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց կրթության մասին օրենքն ընդունեց 2005թվականին, որից հետո ներառական կրթությունը ընդգրկվեց կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: 2012 թվականից ՀՀ ԿԳՆ-ն հանդես եկավ մի նախաձեռնությամբ, որի համաձայն շրջանառությունից պետք է հանել ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը և այն ներառել << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի մեջ ՝բոլոր հնարավոր տարբերակված մոտեցումներից խուսափելու համար: Իսկ դա նշանակում է, որ խոսքը գնում է համընդհանուր ներառականության մասին, այսինքն ՝ ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները ինքնըստինքյան դառնում են ներառական:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասինե ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև

2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը: [4]

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը::

<< Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը ասում է .Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Ինչից ենթադրում ենք, որ ներառական կրթությունը կթություն է բոլորի համար:

Օրենքների փոփոխությունները միտված են այն բանին, որ << Ներառական կրթություն>> հասկացությունը ընդհանրապես դուրս գա մանկավարժական հանրությոան խոսակցականից, ասել է, թե ՝ յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ մոտեցման կարիք ունի:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է , որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում:Համընդհանուր ներառական կրթության ներկայիս քաղաքականությունը և մեխանիզմները շահեկան են թե կրթության նպատակային կազմակերպման, թե մարդու իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է , երբ շահում է երեխան, ընտանիքը, պետությունը

և հասարակությունը:Կթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դառնում են իրավահավասար բոլոր երեխաների հետ: Ներառական կրթությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող երեխաները մասնակցում և միասին սովորում են նույն դասարանում:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման ՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Ներառական կրթությունն ուղղված է հոգալու ոչ միայն հաշմանդամություն ունեցեղ երեխաների կրթական կարիքները . խտրականության կարող են ենթարկվել նաև որոշակի սոցիալական խավի, ազգային փոքրամասնության և այլ անհատական առանձնահատկություններ ունեցող երեխաներ:

Որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են ՝ մասնակցություն, համագործակցություն, հավասարություն, որոնք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է :

Ի վերջո, ինչի՞ց է սկսվում ներառական կրթությունը, որի արդյունքում երաշխավոնվու է որոկյալ կրթությունը: Սկսվում է մանկավարժների վերաբերմունքի (սիրտ), հմտության (ձեռք) և գիտելիքի (գլուխ) եռամիասնության դրսևորումից: Առանց այս հավասարասրուն եռանկյան գոյության շատ դժվար կլինի խոսել որոկյալ կրթության մասին, ուստի ուսուցիչներն ու դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները իրենց մեջ պետք է ունենան այս հավատամքը՝ սիրտ (վերաբերմունք), գլուխ (գիտելիք) և ձեռք (հմտություն), որոնցով կհաղթահարեն բոլոր այն դժվարությունները, որոնց նրանք բախվում են ամեն օր: [3]



ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը

Այսօր, արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունը համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, մշակութային և համայնքային կյանքում, միաժամանակ, կանխելով նրանց՝ կրթական համակարգից դուրս մնալու խնդիրները:

Նպատակը .

Հայաստանի հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններն այսօր արդեն լիովին անցում են կատարել համընդհանուր ներառական կրթության :

Թեման, լինելով արդիական, ունի ևԲ առավելություններ, և Բ մի շարք դժվարություններ: Հետազոտական աշխատանքի նպատակը կայանում է նրանում, որ խոսելով և կարևորելով համընդհանուր ներառական կրթությունը, առանձնացնել ներառական կրթության առավելությունները , միաժամանակ վեր հանել նաև դժվարությունները, ինչու չէ անել առաջարկություններ՝ դժվարությունների հաղթահարման համար:

Խնդիրները

Յուրաքնչյուր նպատակի իրագործման ճանապարհին բախվում ենք խնդիրների հետ: Երեխաները, անկախ կարիքից , դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Համընդհանուր ներառականությունը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երեխայի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինտեգրվել միջավայրին, օգտվելու ինքնարտահայտման իրավունքից , ձեռք բերելու անհրաժեշտ կարողունակություններ և դառնալու վաղվա կոմպետենտ քաղաքացի:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը կազմված է ներածությունից, 1 գլխից, որը բաժանվում է չորս ենթագլուխների, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1. Համընդհանուր ներառականությունը Հայաստանում

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով, համաձայն որի՝ ,Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով: 2005 թ. ,Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասինե օրենքի ընդունումով սահմանվեց ,ներառական կրթությունե հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ ,Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետե:2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: [3]

Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական,

սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

1.1 Համընդհանուր ներառականության առավելությունները .

Խոսելով համընդհանուր ներառականության մասին՝ <<Նպատակ>> բաժնում նշել էի, որ այս կրթությունը ունի մի շարք առավելություններ , որոնք են.

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: [1]

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը:

Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Բոլոր երեխաներն ունեն պատկանելության զգացում

Ներառական կրթությունը հիմնված է այն պարզ գաղափարի վրա, որ յուրաքանչյուր երեխա և յուրաքանչյուր ընտանիք գնահատվում են հավասարապես և արժանի են նույն հնարավորություններին և փորձին: Ներառական կրթությունը հաշմանդամություն ունեցող երեխաներին `լինի դա թեթև, թե ծանր, թաքնված կամ ակնհայտ, հնարավորություն է տալիս մասնակցել ամենօրյա գործողությունների, ճիշտ այնպես, ինչպես կանեիք, եթե ձեր հաշմանդամությունը չլիներ: Խոսքը ընկերություն կառուցելու, հանդուրժող համայնք կազմելու և նրանց համար նույն հնարավորություններն ստեղծելու մասին է, ինչ բոլորն ունեն:

Բացի վերը թվարկվածներից , կնշեմ նաև ներառական կրթության այլ առավելություններ.

• Յուրաքանչյուր ոք կարող է սովորել յուրաքանչյուրից և նաև բարելավել իրենից լավագույնը

• Անհատական ուժեղ և նվերների մշակում, յուրաքանչյուր երեխայի համար բարձր և համապատասխան սպասումներով:

• Անհատական նպատակների վրա աշխատելը, միաժամանակ մասնակցելով դասարանական կյանքին `նույն տարիքի այլ ուսանողների հետ, կբարձրացնի յուրաքանչյուր երեխայի կարողությունները

• Ներգրավել ծնողներին իրենց երեխաների ակադեմիական կրթության և տեղի դպրոցական գործունեության մեջ

• Հարգանքի և պատկանելության դպրոցական մշակույթի խթանում

• Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս սովորելու և ընդունելու անհատական տարբերությունները ` նվազեցնելով բռնության և բռնության ազդեցությունը

• Ընկերության զարգացում այլ երեխաների բազմազանության հետ, յուրաքանչյուրն ունի իր անհատական կարիքներն ու կարողությունները

• Համայնքի ներսում բազմազանության և ավելի լայն մակարդակի ներառումը

1.2 Համընդհանուր ներառականության դժվարությունները

Խոսելով համընդհանուր ներառականության առավելությունների մասին՝ պետք է հստակ պատկերացնել նաև այն դժվարությունները, որոնք առաջանում են ներառական կրթությունն իրականացնելիս:Առանձնացրել եմ հետևյալ մարտահրավերները.

Խելամիտ հարմարեցումներ

Խելամիտ հարմարեցումները նախատեսված են այն անձանց համար, որոնք ունեն հաշմանդամությամբ պայմանավորված ֆունկցիոնալության սահմանափակում ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցություն ցուցաբերելու առումով:

• Այսօր ՀՀ դպրոցների մեծ մասը դեռևս չունի բոլոր հարմարեցումները (թեքահարթակ, հարմարեցված սանհանգույց, երկրորդ հարկ տանող թեքահարթակ կամ վերելակ, ռեսուրս-սենյակ , հարմարեցված սպորտդահլիճ և այլն) և դա դժվարություն է առաջացնում հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար:

• Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:

•Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում

• ՀՀ դպրոցների մեծ մասը չունեն առանձնացված դասասենյակներ, ռեսուրս-սենյակներ, անհրաժեշտ գույքի խիստ պակաս կա, մինչդեռ ուսուցիչները կարծում են, որ դասասենյակը, որտեղ մասնագետ-ուսուցիչները աշխատում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, պետք է լինեն հագեցած համապատասխան գույքով, դիդակտիկ նյութերով, լինեն լուսավոր, պայծառ ու գունեղ, սեղաններն ու աթոռները լինեն հարմար :

• Դպրոցների մեծ մասն ունեն մասնագիտական ռեսուրսների պակաս:ԿԱՊԿՈՒ երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից կազմված թիմը, սակայն իրականում կա մասնագետների պակաս և ամբողջական թիմ չի հավաքվում:

• Ուսուցիչների համար դասընթացների կազմակերպման պակաս կա, քանի որ բացի ներառական կրթության մասին ընդհանուր գիտելիքներից, կարևոր են նաև մասնագիտական գիտելիքների զարգացումը: Աշխատելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ՝ հաճախ առաջանում են հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները չունեն:

• ԱՈՒՊ-ների մշակման ժամանակ առաջանում են դժվարություններ, քանի որ այս պլանը պետք է կազմվի յուրաքանչյուր աշակերտի համար անհատապես՝ մասնագետ-ուսուցիչների, ծնողների հետ համատեղ, սակայն այդ կապը թույլ է. Ծնողներից շատերը չգիտեն պլանը համատեղ կազմելու հնարավորության մասին կամ էլ անտարբեր են:

Առաջարկություններ

Որպես հանդիպող դժվարությունների լուծում , առաջարկում եմ՝

• Կիրառել սովորողների գործունեությունը ակտիվացնող կրթական տարբեր մեթոդներ, տեխնոլոգիաներ (խաղային տեխնոլոգիաներ , խմբային գործունեության ձևեր և այլն)

• Հաճախակի կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումներ՝ ներառական կրթության, ԱՈՒՊ-ների մշակման վերաբերյալ:

• Դպրոցներին տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ

• Հնարավորության սահմաններում աջակցել՝ դպրոցներում ունենալու ռեսուրս-սենյակներ, անհրաժեշտ գույք, դիդակտիկ պարագաներ և նյութեր:

1.3 Առաջատար երկրների փորձը համընդհանուր ներառականության վերաբերյալ

Ներառական կրթության մասին իրենց փորձով ներկայացել են աշխարհի առաջատար շատ երկրներ, որոնք ,մինչև համընդհանուր ներառականությանը հասնելը , հանդիպել են շատ դժվարությունների:

Ներառական ուսուցումը Բելգիայում

Բելգիայում առաջին անգամ հատուկ դպրոց բացվեց մտավոր հետամնաց երեխաների համար 1897թ-ին:Մինչ այդ՝ այնտեղ, հանրային դպրոցում սովորող և հետ մնացող երեխաներին տեղափոխում էին նույն դպրոցի ավելի ցածր դասարաններ:Պարզ է, որ այդպիսի ոչ կազմակերպված ինտեգրման դրսևորումը միայն խանգարում էր կրթա-դաստիարակչական գործընթացին, որի հետևանքով Բելգիական կրթական համակարգը ևս անցավ հանրային և հատուկ կրթության առանձնացման ճանապարհով:[3]

Ներառական ուսուցումը Սկանդինավյան երկրներում

Հետաքրքիր է Սկանդինավյան երկրների փորձը: XIX դարի 90- ական թվականներից սկսած Նորվեգիայում սկսեցին բացել ,հատուկե դասարաններ՝ սովորական դպրոցներին կից, որոնք հետագայում առանձնացան որպես, այդպես կոչված, հատուկ դպրոցներ, որտեղ բացի թույլ ընդունակություններով երեխաներից կային նաև առողջական սահմանափակ հնարավորություններով ՝օրինակ, լսողական կամ տեսողական, կակազելու խանգարումներով երեխաները, որոնք չէին հասցնում յուրացնել դպրոցական ծրագիրը:Այդ դպրոցները ավանդական տեղակայված էին սովորական դպրոցի շենքում կամ դրա կողքին, որպեսզի երեխաները ընդմիջումների և խաղերի ժամանակ չդադարեն շփվել սովորական հասակակիցների հետ: Նույնատիպ համակարգ էր գործում նաև Շվեդիայում: Այսպիսով, Սկանդինավյան երկրներում արդեն նկատվում էր մանկավարժական ինտեգրման միտքը, ի դեպ ոչ թե տարերային, այլ գիտակցված իրականացվող կրթական քաղաքականության ձևով:[3]

1.4 Համընդհանուր ներառականության առավելություններն ու դժվարությունները մեր դպրոցում

Ինչպես արդեն վերը նշեցի, համընդհանուր ներառականությունը իրենից ենթադրում է կրթություն բոլորի համար: Այն ունի բազում առավելություններ, սակայն որոնց իրագործման համար մենք հաճախակի բախվում ենք դժվարությունների:

Աշխատանքային փորձիս ընթացքում աշխատել եմ ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտների հետ: Այժմ էլ աշխատում եմ ՄՈՒԿ ախտորոշմամբ աշակերտի հետ՝ պայմանավորված ինտելեկտուալ (մտավոր)ֆունկցիաների ծանր խանգարումով, դասավանդում եմ << Ես և շրջակա աշխարհը>> առարկան: Երեխայի համար կա կազմված ԱՈՒՊ, որտեղ, ելնելով երեխայի կրթության առանձնահատկություններից, դրել եմ տարեկան նպատակ և կարճաժամկետ նպատակներով փորձում եմ հասնել տարեկան նպատակին:

Ներառական կրթությունը աշակերտին հնարավորություն է տալիս ինտեգրվել դպրոցին, նա արժանանում է ուշադրության դասընկերների, ուսուցիչների կողմից, դպրոցում իրեն լավ է զգում, ուսուցիչների աշխատանքի արդյունքը նկատելի է:

Ինչպես շատ դպրոցներ, այնպես էլ մեր դպրոցում բացակայում են որոշ խելամիտ հարմարեցումներ՝ հարմարեցված սանհանգույց, երկրորդ հարկ տանող թեքահարթակ կամ վերելակ, ռեսուրս-սենյակ , հարմարեցված սպորտդահլիճ և այլն, քիչ են նաև դիդակտիկ պարագաներն ու նյութերը: Աշակերտի հետ աշխատում եմ գրադարանում առանձնացված ռեսուրս-անկյունում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով համընդհանուր ներառականության առավելություններն ու դժվարությունները ՝ այն ևս մեկ անգամ հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել ներառական կրթության, ներառման քաղաքականության, այս ոլորտում հանրակրթական դպրոցների ձեռքբերումների, առկա դժվարությունների, բացթողումների և այլնի մասին:

Հարկ է նշել, որ ներառական կրթության համակարգը կարևորագույն քայլ է ավելի առողջ, հանդուրժող ու հոգատար հասարակություն ունենալու համար: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման ՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության առաջարկած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն ,ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Սակայն մինչ ներառական կրթության անցնելը դպրոցը պետք է համալրված լինի համապատասխան մասնագետներով (հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ և այլն) և խելամիտ հարմարեցումներով, որպեսզի ուսումնական գործնթացը լինի ավելի արդյունավետ և ճիշտ կազմակերպված:

Այս ամենից ելնելով՝ հանգեցինք հետևյալին.

Ներառումը մոտեցում է, որի դեպքում պետք է հաշվի առնվի աշակերտների բազմազանությունը, երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա և ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցնել սովորողների ընդունակություններին ու պահանջմունքներին: Այս պրոցեսում կարևոր է ուսուցիչների, բազմամասնագիտական խմբի յուրաքանչյուր անդամի, ծնողների և նրանց դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով: Մնում է ակնկալել և հուսալ , որ կայացվելիք որոշումը նպատակ չունի դառնալու պետական հերթական պլանի կատարում , իսկ ներառական կրթության ինստիտուտը կդառնա այն առաջին քայլը , որը կապահովի հատուկ կարիքներով անձանց լիիրավ ինտեգրումը հասարակությանը:

Գրականություն

1. Ներառական կրթության իրականացման ուղեցույց, Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար, Երևան, 2008, էջ 36
2. Ներառական կրթություն: Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ, Երևան, 2015 ,էջ 40
3. Համացանց-Վիքիպեդիա `ազատ հանրագիտարան
4. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք , 09.02.2022թ